

ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՂՈ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՆՈՐ ԱՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

թ. 376ա.— Ցաղազս ջրային շարժման, ի նուաստ Ցովհաննիսէ եղբնկեցոյ, զարդարեալ յիմաստնոցն բանից, ի խնդրոյ բարեպաշտ և երկիւղազարդ պատանոյն պարոն Վախտանգայ:

Ամենայն ոք որ զբան, որ է ծնունդ անմարմին մտաց գոռվ ի բարտիզի կամիցի դրշմել, պարտի և զնորին պատճառն յանդիման կացուցանել, որպէսզի վերջին ժամանակին ծնընդոց մարդկան, յօարութիւն և զսէր խնդրողի բանին և աշխատանք տուող խնդրոյն, մի ծածկեսցի ի բանասիրաց և աշխատասէր անձանց, զի կարօտքն բանի, իրրե զերկիր ծարաւուտ զցող բաղցրութեանն երկնիս խնդրեսցն, և ապա սպասաւորքն բանի, իրրե զամպ ընդունակ ցոյց զառեալ յանսահման ծովէ իմաստից և ի գետոց սահմանէ, լաղազս ծովութեանն մի արգելցին, ըստ որում և ես նուաստ Ցոհաննիս եղբնկացի, աշշակերտ հոգէից հօրն և սուրբ վարդապետին (թ. 376թ) Վարդանայ սպասաւոր Սուրբ Գրոց բանի, ի թուին ԶԼԳ (1285), պատահեցայ գալ ի կողմանս, աստուածապահ թագաւորութեանս աշխարհիս Վրաց, ի հոչակաւոր և ի մեծ մայրաքաղաքիս Տփիսիս, Փայտակարան կոչեցեալ ի գիրս պատմողաց, և հանդիպեցաւ խօսիլ մեզ բանս քարոզութեանն, ի դուռն եկելեցւոյն, մեծապատիւ և ի խոհեմամիտ մեծի իշխանին հայոց պարոն Քարիմատին, զոր շինեալ էր աստուածասէր և բարեհոգի հայրն նորա պարոն Մէկն, և էր խօսեցեալ բան յաղազս ջրային շարժմանն, վասն որոյ ախորժելի եղև զուարժամիտ պարոնոյն Վախտանգայ, որ է որդի կրսէր, հոշակաւոր անուան պարոն Մէկին, և մայրենի ազգաւ թոռն մեծի իշխանին Զալալի տեառն Խաչենոյ, որդի մօր պարհպաշտի, որ էր Քրիստոսի օրինօքն զարդարեալ հոգի, և ի խնդիր բանիս յորդորողի զորդի, սա խնդրեաց ի մէջն յաղազս երկնի և նորին շարժմանն, յոր հարկեալ յորդորեաց զուկարութիւնս մեր, մեծ ազգէ պարոն Տէր Ցոհանն ազնուական զարմից և բարետօնմիկ հայոց ծնունդ, որ և շարժեալ (թ. 377ա) ի սիրոյ և ի յուաոյ խնդրողաց, և ակն առեալ ի պատուոյ շնորհաշուր տեառն և գերապատիւ եկեղեցւոյ գլխոյն, ի նրբաշակիլ և ի կորովամիտ բանից սուրբ հարցն-և վարդապետաց մերոց, և իմաստնախոն արանց, պարզեալ գրեցի համառօտ բանիւք և աշխարհական խօսիք, վասն դիւրաւ հասկա-

նալի լինին ընթերցողաց: Եւ արդ, որ գրէք յաղազս օգտի զաւկաւ աշխատութիւնս մեր, գրեսչիք և զայս նախաղրութիւնս և զրան յիշատակի անուն խնդրողաց և գրողի սորին, գրեալ լիշիք և դուք ի գիրն կենաց, և որ ծուլանայ և թողու զայս, ոչ լիցի առանց պատցոյ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

թ. 158ա.— ՌՃԿԲ (1713) թուին Հայոց: Գրեցաւ Սուրբ Գիրքս աստուածաբանութեանն Սրբոյն Դիոնէսիոսի, ընդ հովանեաւ մեծի Ամլորդոյն վանս, որ ի յերինջակ գաւառի, ձեռամբ ամենամեծ և տրուպ ծառայէ Տեառն նսայի և եթ անուամբ բանի սպասաւոր, և անարժան ծառայ Սրբոյ Կարապետին, որ և ծնընդեամբ նորո գեղչէ, ի յառաջնորդութեան սրբոյ վանացս Մեսրոպ քաջ րաբունոյ, ի դառն և խիստ ամանակի, որ մարախս պատեալ էր զերեսս երկրի նաև ցորեան յոյժ թանկ, և այլ սենից նեղութիւնն սաստկացեալ ի վերայ բոլոր ազգիս, և ոչ ոք որ լայր զմեզ, որպէս երեմիայն զհինն ի և Զայս Գ մեծ նեղութիւնս կրէինք վասն բազում մեղաց մերոց, որ և ողորմածն Աստուած փրկեսցէ զմեզ ապագայիցն, ամէն:

թ. 196ա.— Քահանայակցի Տիմոթեայ, ի Դիոնէսիոսի քահանայէ: ՌՃԿԲ (1713) ժրեցաւ:

թ. 337ա.— Թուին Հայոց յափուեանս ՌՃԿԲ ժրեցաւ:

Գթութեամբ և շնորհիւ, ամէն, ամենազօր Սուրբ Հոգույն, որ ետ կարողութիւն տկար անձին իմոյ, յանգն աւարդ հասուցանել զգիրք Սրբոյն Դիոնէսիոսի, ընդ հովանեաւ Սրբոյն Կարապետին և Սրբունոյ Աստուածածին և Սրբոյ նախավկայի ըՄտէփանոսի, որ ի յերկիրս նախշուվան և ի նահանկի երինջակու վանք Սուրբ Կարապետ որջորջի, ես տրուպ ծառայից ծառայ նսայի, բանի մատակարար, գրեցի և կազմեցի զուոր գիրքս ձեռամբ իմով, յիշատակ հոգոյ իմոյ, այլ և հոգեոր և մարմնաւոր ծնողաց և ուսանողաց իմոց, յերես ի հողոյ եղեալ աղաշեմ սուրբ եղբարց յիշել զիս մի Հայր մերիւ, ամէն:

թ. 337բ.— Յիշատակարան գրոցս:

Շնորհիւ և գթութեամբն Աստուծոյ, ես Ստեփանոս իլովացի, յետին ի բանասիրաց, տեսեալ զգիրս Սրբոյն Դիոնէսիոսի այլափոխեալ, և բազում տեղիս ապականեալ, փոյթ յանձին կալայ վերըստին թարքմանել ի լատինացւոց բարբառոյ ի մեր լեզու, և զայս աշխատութիւնս յանձն առի մանա-

* Եարումակված ուշմիածինս ամսագրի 1960 թվականի Ն և Ե-ից, Ե-ից, Թ-ից և 1961 թվականի Ն Բ-ից և Գ-ից.

անդ վասն երից պատճառաց: Նախ՝ զի ընթերցումն գրոց դիրքածեռն ուսումնասիրացն, և մի ինչ անյալութիւն ի խրթնածածուկ բանիցն Սրբոյն Դիոնէսիոսի, այլ ամենայն բան և իմացումն պարզ երենեսի, վասն որով ընդարձակ և բովանդակապէս իրաքանչիր բանից մեկնութիւնս առընթեր դրոշմեցի: Երկրորդ՝ հարկեալ գոլով առ ի ինդորյ բարեմիտ եղբարցն որք ի Սուրբ Աթոռու էջմիածին, ի հրահանս իմաստափրութեան կըրթիւն զանձինս իրեանց, ոչ կարցի անտես առնել, այլ զանց արարեալ զտկարութեամբս իմով, յօժարեանել զայս իրողութիւնս ի յաւարտ հասուցանել, քանզի զայսու ժամանակաւ բազումք էին երեկելիք վարդապետք բաջարանք, բանաստեղծք աստուածային գրոց քաջ գիտամք և հմուտք, յորոց մի էր և Առոքել վարդապետն քաջ բարունին և վիպասան, որ զամանակագրութիւնս հայրապետաց և թագաւորաց գեղեցկայարձար բանիք դրոշմեաց, և իր յիշատակ անջնջելի եթողի երրորդ պատճառ՝ զի մի երենեցայց զբանքարն, զոր ի Տէր ընկալայ, ի վարշամակի ծրարել, և ընդ գատթար ծառալին զպատիճն ընդունել, վասն որոյ պատշաճ վարկայ ի սեղանաւորս հոգոց մանկանց եկեղեցւոյ բաժանել, և ի պարտուց ազատիլ. (թ. 338ա) որպէս և յառաջ քան զայս այլ այլ շարադրութիւնս թարմանեցի Տէր Յովսեփոս պատմագիր, և միւս գիրս որ ասի Պատճառաց և Հարանց վարք, որ կոչի Հայելի վարուց, ի լեհաց բարբառոյ ի հայոց լեզու փոխարկեցի: Արդ, եթէ ինչ բարւոք և հաճոյ թուեսից ուսումնասիրաց և ընթերցողացդ, փա՛ռք և գոհութիւն տուողին զշնորհս, իսկ եթէ ինչ ոչ ուղղակի և ընդդիմ արուեստաբանութեանն քերթողացն գտանիցի, աղալեմ ներել պակասութեան, քան զի այսքան մեր կար:

Արդ, թարքմանութիւնն գրոցս եղեւ ի թուարերութեան տօմարիս Հայոց Ռժծիլ (1669), և ի հայրապետութեանն Տեառն Յակոբայ Սրբազն Կաթողիկոսի ամենայն հայոց, որ զկնի երիցս երանեալ հայրապետի Տեառն Փիլիպպոսի, յաջորդեաց զԱթոռոն կուաստրչին, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւոր պահեսցէ ի պարժանն Հայոց ազգիս և ի հաստատութիւն Կաթուղիկէ Եկեղեցւոյ: Եւ արդ, հայցեմ ի բանասէր ուսումնասիրաց անձանց և ի ճաշակողացդ յայսր հոգեսոր սեղանոյ, յիշատակել զիս ի մաքրափայլ մաղթանս, և ինձ ներումն յանցանաց շնորհել, թերևս աղօթիւք ձերովք ծող ողորմութեանն մարդասիրին Աստուծոյ ծողեսցէ ի շիրիմ ոռկերաց իմոց, և անոմ գրեսցի ի դպրութիւնն կենաց, որով և զուք եղիշիք գրեալ ի մատեանս կենաց վերին դպրու-

թեանն, ամէն: Ըստ սմին մաղթեմ և զայս գուզնաքեայ յիշատակս դրոշմել, եթէ ոք զայս իրողութիւնս գաղափարիցէ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ որ է օրհնեալ յակիտեանս, ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

թ. 8ա.— Խաշատուրք..

(Կա մի անընթեռնելի կլոր կնիք):

թ. 69թ.— Զո վոր ասեն զինէն մարդիք թէ իցեմ:

№ 137

Ա.Ի.Ե.Տ.Ս.Ր.Ա.Ն

ԹԵՐԹԵՐԸ 245.— ՊՐԱԿՆԵՐԸ 22, լոգաքանչըուրը 12 թերթից, ի բաց առաջ իր՝ 4, Ա, է, Ժ, ԺԲ, Խ՝ 10, Ը՝ 11 թերթից:— ՄԵՇՈՒԹՅՈՒՆՆԸ 21, 3×16×4, 7 սմ.:— ՆՑՈՒԹԸ գեղնած և կեղտոտած սովորական թուղթ:— ԿԱԶՄԸ առջեր կաշեպատ տախտակ, իսկ կանակը կաշեպատ սովարաթուղթ: Կաշին տեղ-տեղ պատված է, իսկ վրան էլ ճնշումով զարդեր են նկարված: Զուգ բանիները և վրայի գամերը ընկեր են:— ՊԱՀՊԱՆԱԿԱՆՆԵՐԸ սկզբից երկու թերթ հասարակ թուղթ:— ՎԻՃԱԿԸ պրոց շափով քայթայլած: սկզբից և վերջից թերթի:— ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ երկուուն:— ԳԱՏԱԿՐ ԹՂԹԵՐԸ չկան:— ՏՈՂԵՐԸ 22:— ԳՇՈՒՄ-ՆԵՐԸ ճնշումով:— ԳիրԸ բոլորգիր:— ԶԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ճեռագիրն ունի հասարակ ոճով նկարված մը խորան թ. 222ա (Ժյուսները ընկել և կորել են), հասարակ թոշնագրեր և զարդագրեր, լուսանցազարք գեր և գմբեթներ, թոշուններ և խաչեր, զարդեր և մարդագլուխ թողմներ (թ. թ. 36թ, 116ա և 157ա):— ԳԻՒՉԸ Ավագ:— ՊԱՏՎԻՐԱԾՈՒՆՆԵՐԸ Կարգան արեղա և Ամիրպեկի:— ՄԱՂԿՈՂԸ անհայտ:— ԺԱՄԱՆԱԿԸ 1571 թ.:— ՎԱՅՐԸ անհայտ:— ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ստացված է նվեր մի քահանայից 1960 թվականի ապրիլ ամսին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

թ. 79ա.— Աւետարան ըստ Մաթէոս, և զայնպիտան գծոյն Աւագս, և Վարդանս ըստացող Սուրբ Աւետարանիս, և զեղբայրն իմ Ամիրպեկն, ետ գրելոյս հանգաւ առ Աստուած, յիշեցեք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ, ամէն: Թվ. Ռժթ (1571):

թ. 131ա.— Համբարձմանն կարդայ զսայ և զանարդան գծողս Աւագս յիշեա և Աստուած զձեզ յիշէ: Վարդան արեղես ըստացաւ Աւետարանիս յիշա և Աստուած զձեզ յիշէ:

թ. 134թ.— Զերիցս երանեալ և զարժանապատիւ զսրբաւէր Վարդան սրբակրաւն արեղայ ստացող Սուրբ Աւետարանիս, հանգերձ ծնաւղաքն և ամենայն արեան մերձաւորաւաք և զիմ անարժանութիւնս Աւագի, գծողի սորայ, յիշեցէք ի Քրիստոս:

Յուսալով ի բան մարգարէին, որ ասէ՝ երանի որ ունիցի զաւակ ի Սիովն և ընդհանի ի վերինն երուաղէյ, և ի բանն որ ասէ՝ Գանձեցէք ձեզ գանձ յերկինս, որ ոչ գող մերձենայ, և ոչ ցէց ապականէ, և բարէմիտ այս յով Վարդան քահանայ ետ գրել զՍուրբ Ամեսարանս ըստ այսմ յուսոյ ի զալալ ինչից իւրոց, յիշատակ ինձ և ծնողացն Սողակէկին, Մէլիքճանին և եղբարցն Ամիրպէկին: Ետ գրելիս հանկաւ ի Քրիստոս: Ողովակէկին, քոյրն Խոնտաղին, (Բարա) Պապաճանին, Մաւելին, Յոհանին և ծնողացն Նանայճանին, Նազաղին, յիշեցէք:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

թ. 22ա.—Տ. Գալուստ (և մի ուրիշ անընթեռնելի անոն):

թ. 79ա.—Կա Հայատառ մի կնիք, որն անընթեռնելի է: Նույն կնիքը կա նաև մի քանի այլ էշերում:

թ. 90ր.—Կա անընթեռնելի հինգ բառ:

թ. 137ր.—Ցաշայի է ծառայ Աստուծոյ (ապա կա մոտավորապես տառը անընթեռնելի բառ):

թ. 159ա.—Ազանաւա է Սահկըս ստաց է (5—6 անընթեռնելի բառ):

թ. 160ր.—Սահակ մաուր (11 անընթեռնելի բառ):

№ 138

ՄԱՇՏՈՑ

թԵՐԹԵՐԸ 201:—ՊՐԱԿՆՆԵՐԸ. 17, յուրաքանչյուրը 12 թերթից, որոնցից միայն ժԶ-ն 9 թերթ ունի:—ՄԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ 19,8×13×3,8 սմ.:—ՆՅՈՒԹԸ՝ գեղնած և կեղտոտած հասարակ բարակ թուղթ:—ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով նկարված է խաչ և մի այլ զարդ: Սկզբում խաչի վրա մեխերով ամրացված են եղել որոշ զարդեր, որոնք հետագայում ընկել են: Կազմը ունի կաշյա մի բռնիչ, մյուս երկուաը ընկել են:—ՊԱՀՊԱՆԱԿԱՆՆԵՐԸ՝ սկզբում և վերջում կան մեկական թերթ մագաղաթ, գեղնած, խունացած և տեղ-տեղ պատոված, որոնք միմյանց շարումակություն են: Տեքստը նոր կտակարանից է, ուղղագիծ երկաթաքրով, ժ-ժ գարերից:—ՎԻՃԱԿԸ՝ բավարար է, սակայն վերջից հիշատակարանը ընկել է, թ. թ. 190—201 տարրեր ձեռագրի է պատկանում:—ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միայնում՝ թ. թ. 2—180 և երկայնում՝ թ. թ. 181—201:—ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ 1 և 189:—ՏՈՂԵՐԸ 21:—ԳՍՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով:—ԳԻՐԸ՝ բոլորքիու:—ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրը ունի մի կիսախորան (թ. 2ա), ինչպես նաև բավական սիրուն

թոշնագրեր և զարդագրեր, լուսանցազարդեր և թոշուններ: Օգտագործված է միայն կարմիր ներկը:—ԳՐԻՉԸ՝ անհայտ:—ՊԱՏՎԻՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ եղամիր և Թաղում:—ՄԱՂԿՈՂԸ՝ անհայտ:—ԺԱՄԱՆԱԿԸ՝ ժէ դար:—ՎԱՅՐԸ՝ անհայտ:—ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ սույն ձեռագիրը ստացված է 1954 թվականին Երևանի Ս. Զորավոր եկեղեցուց, Տ. Հովհաննես քահանա Կարապետյանի մէջոցով:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐԱՆԵՐ

թ. 27ա.—Աստուած ողորմի Սքանդարին, ամէն:

թ. 57ա.—Աստուած ողորմի Խսքանդարին:

թ. 61ր.—Զմեղաւոր փծուն գրողն յիշեցէք ի Քրիստոս:

թ. 72ր.—Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա ըստացողի գրոցս Թաջումին, Խօշամիրին, և դատերացն Յամասին, Լալի խանին, և որդոցն Ալէքսանին, Մարկոսին, սարկաւագ Մարտիրոսին. ամէն:

թ. 101ա.—Ողորմեա Տէր Աստուած ստացողի սուրբ Մաշթոցիս Խօշայմիրին, և իւր կաղակցուն Թաջումին, և իւր դատերացն Յամասին, Հոփիփիմին, և որդոցն Ալէքսանին, Մարկոսին, Մարտիրոսին, Զմրութին, և իւր արեան մերձաւորացն որ ետ արեան մերձաւորացն, որ ետ զսա գրեալ յիշատակ իւր հոգին և իւր կողակցին Թաջումին:

թ. 124ա.—Տէր Յիսուս, ողորմեա ստացողի գրոցս Թաջումին, և իւր կողակցուն Խօշամիրին, և դատերացն Յամասին, Հոփիփիմին, և որդոցն Ալէքսանին, Մարկոսին, Մարտիրոսին, Զող խաթունին, Նորիխանին, մեծի և փոքր Աստուած ողորմեսցի իւրեանց հոգոյն, ամէն:

թ. 129ա.—Աստուած ողորմի ստացողի գրոցս Թաջումին, Խօշամիրին, ամէն:

թ. 189ա.—(գլխավոր հիշատակարանի վերջին մասն է):

....տանին, Մարկոսին և դատերացն Յամասին, Լալիխանին, ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Զեռագրի սկզբի մագաղաթյա պահպանակի 2-րդ էջի վրա):

...ամանու Անմեղիքոս Մարտիրոսի Դիրիանոս Հոփիփու Տատիանոս սուրբ մանկումք:

թ. 1ա.—Մասգ:

թ. 114ա.—Աստուած ողորմի Ցակորի հոգուն. որ ֆէրի երեր կերանք, Աստուած զիւր մեղք թողնու, ամէն:

թ. 189ա.—Խանքն: Ամէն: Փա՛ռք բեղ Աստուած:

թ. 189բ.—Արդար Աստուած, անտեսանելի Աստուած, արդարայդատ Աստուած, երկայնամիտ Աստուած, ողորմած Աստուած, դմած Աստուած, անօհակալ Աստուած, անյշշայլար Աստուած, բազմայդոյդ Աստուած, բազումողորմ Աստուած:

№ 139

ՀԱՐԱԿԻՆՈՑ

ԹԵՐԹԵՐԸ 353:—ՊՐԱԿՆԵՐԸ 30, յուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց առյալ Ա՝ 9 և Լ՝ 8 թերթից:—ՄԵ-ՍՈՒԻԹՅՈՒՆԸ 13,2×9,4×6,6 մմ:—ՆՅՈՒԻԹԸ գեղ-նած և կեղտոտած սովորական թուղթ:—ԿԱԶՄԸ կաշե-պատ տախտակ, որի երկու կողերում ճշշուառվ նկար-ված է մեկական սիրուն շրջանակ: Կազմի երկու բռնիշ-ները ընկել են:—ՊԱՀՊԱՆԱԿՈՒՆԵՐԻ լիան:—ՎԻՃԱԿԻՇ բալարար:—ԳՐՈՒԹՅՈՒՆԸ միասյուն:—ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ լիան:—ՏՈՂԵՐԸ 21:—ԳՅՈՒՄՆԵՐԸ ճը-շոմով:—ԳԻՐԸ բոլորգիր:—ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան սիրուն խորաններ և կիսախորաններ, թռչնագրեր և զարդագրեր, գլեթեներ և խաչեր, թռչուններ, ծառեր, լուսացնազարդեր: Մրանցից բացի կան նաև մի քանի գեղեցիկ նկարներ, թռչունի մարմնով մարդու գլուխ (թ. թ. 64 և 198բ), կետ ձկան բերնում Հովհանն մար-դարեն (թ. 50ա), կորած գլուխ (թ. 133ա) և հրշաւակ (թ. 246ա):—ԳՐԻՉԸ Հովհաննես եպիսկոպոս:—ՊԱՏ-ՎԻՐԱԾՈՒՆ՝ Ավետիք վարդապետ:—ՄԱՂԱՐԸ ան-հայտ:—ԺԱՄԱՆԱԿԻՆ՝ 10 մարտ 1513 թ.:—ՎԱՅՐԸ Դարանալյաց (Կամախ) գալաքի Սեպաւէ իռան ստո-րոտր:—ՄԱՆՈՒԹԻՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված կահիրեաբնակ Նասիպյան Հրանտից, 1956 թվականին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը հայկական միջնադարյան խա-զագրության հիմանալի մի նմուշը է, շարակ-նոցն ամբողջությամբ գրված լինելով հայ-կական խազերով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

թ. 352բ.—Արդ, գրեցաւ եղանակաւոր տառս, որ կով շարակնոց, ձեռամբ մեղա-պարտ և անհմաստ փրծուն գրչի Ցովանէս եպիսկոպոսի, ի գաւառն Դարանաղեաց, որ ասի Կամախ, ի յոտս Սեպաւէ լեառն, մերձ առ սուրբ գերեզմանին մեր կուսաւորչին, և այլ ամենայն սրբոցն որ աստ կան հաւա-

քեալ, ի թվաբերութեանս Հայկազեան տու-մարի ԶԿԱ (1513 թ.), ի մարտ ամսոյ ի ժ-եղե աւարտ գրոցս այսմիկ: Արդ, յերես ան-կեալ աղաշեմ զզդասս սրբասընեալ քահա-նահցոց, որք տեսանէք ըզսայ, յիշեսչիք յա-ղակթ ձեր գՏէր ներսէսն, զուսուցիչն իմ, և զթովանէս վարդապետն, և զԱրքահամ վար-դապետն: Այլ և զգրիս ծանուցողն զԱւետիք վարդապետն, և զիս մեղաւք լըցեալս և ի յու-ղի ճանապարհէ հեռացեալս ըզծրող սորայ, և զնաշատուր աբեղան, որ զմեր պէտքն և զկարիքն հոգալը անձանձիր, և զսրկաւագն մեր զՂարիպշան, որ բազում աշխատու-թեամբ սպաւորէր մեղ, և որ յիշէ և ողորմի ասէ, յիշեալ լիշի ի Քրիստոսէ Աստուծոյ, ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

թ. 1ա.—Այսաւք անի յայմարն Աստուծոյն որովայ-նի ձայիս իւր մարգարէին (գրված է խազերով).

Ցիշատակ է այս շարական նշանեան Սահակին է, Աստուած բարի վայելում տացէ, ամէնն: Սահակ նշանեան:

թ. 1բ.—Իւր սիրելի մօր յիշատակին կը նուիրէ: Հրանտ նասիպեան, 15.3.956:

թ. 2ա.—(Սև կնիք): Գառնիկ Բայիսեան, 1891: Գառնիկ Բայիսեան, 1891:

թ. 14ա.—Մոց:

թ. 31բ.—Ով գերահրաշ:

թ. 126ա.—Զվերչին ստացող շարկնոցիս զմղտի Պետրոս երեցն և զիւր որդիին զմղտսի Յովասափն և զՍդիս, իւր մայրն եռացին, որ երես զիւր նշանն շարկնոցին գին և փոխեցաւ առ Աստուած, թվին ՌՀՇ (1630):

թ. 126բ.—Հայր առ առաք...

ինձ այն որ հայր Այսաւք անձառ...

Այսաւք Տէրն ի խաչ երաւ

Ամառն մայրոց Մարիամ:

թ. 127բ.—ԿԳԿ (բազմաթիվ էջերում կան սույն չորս տառերը, գրված կարմիր մատիտով):

թ. 353ա.—Զվերչին ըստացող շարկնոցիս գՏէր Աստուածայտուր եպիսկոպոս Դերշանեցին, և զծնաւոյն իւր զէւատն, և զմայրն իւր զՄանիարն, և զեղբայրն իմ զՊուտախն, զՈրդան և զԹամուրն, և զայլ ամե-նայն մերձաւորս իմ, մի ողորմայիւ յիշեսցիք ի մար-րափայլ աղաւիթս ձեր և Աստուած զձեզ յիշէ իւր միւս անդամ գալուտն, ամէն:

(Շարունակելի)